



Եվրոպական գործընկերություն՝ հանուն  
Լեռնային Ղարաբաղի հակամարտության  
խաղաղ կարգավորման



ՍՈՒՑՆ ՆԱԽԱԶԵՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՒՄ Է  
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՐՄԻՏԵ

## Մեր մասին

«Եվրոպական գործընկերություն՝ հանուն Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման» (ԵԳԼՂ) բացառիկ նախաձեռնությունը նպատակ ունի խթանել Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացը: Հարավային Կովկասի մեր գործընկերների հետ միասին մենք իրականացնում ենք մի շարք նորարարական խաղաղարար ծրագրեր՝ միտված տարածաշրջանում կայուն խաղաղության հաստատմանը:

*«Սկզբում չէի կարծում և նույնիսկ չէի կարող պատկերացնել, որ այս ծրագիրը կարող է ինչ-որ բան փոխել իմ մեջ. ոչ թե պարզապես ինչ-որ բան, այլ ինձ համար կարևոր որոշ հարցերի նկատմամբ վերաբերմունքս: Շատ դժվար է հրաժարվել սեփական համոզմունքներից կամ թեկուզև հասկանալ, որ դրանց որոշ մասը ճիշտ չէ: Գիտե՞ք, ես շատ ուրախ եմ, որ իմ ենթագիտակցության մեջ նման փոխակերպում է տեղի ունեցել:»*

Աշոտ և Մարինա

Եվրոպական քաղաքացիական հասարակության նախաձեռնությամբ ստեղծված մեր գործընկերությունը բաղկացած է հինգ անդամ-կազմակերպություններից՝ Conciliation Resources (Մեծ Բրիտանիա), Crisis Management Initiative (Ֆինլանդիա), International Alert (Մեծ Բրիտանիա, գործընկերության առաջատար կազմակերպություն), Kvinna till Kvinna Foundation (Շվեդիա) և LINKS (Մեծ Բրիտանիա): Համագործակցությունը խարսխված է նշված հինգ կազմակերպությունների կողմից առանձին-առանձին կամ այլ կազմակերպությունների հետ միասին նախկինում ձեռքբերված աշխատանքային փորձառության վրա:

Մենք ձգտում ենք սույն ձևով գործակցության միջոցով հակամարտության կարգավորման գործընթացում ձևավորել փոխըմբռնում և վստահություն, որոնք ցանկացած համակարտության կայուն և խաղաղ լուծման առանցքային բաղկացուցիչներն են:

## Մեր հիմնական նպատակները

Մեր հիմնական նպատակն է մի շարք խաղաղարար նախաձեռնությունների միջոցով նպաստել Լեռնային Ղարաբաղի հակամարտության փոխակերպմանը: Կայուն խաղաղության հասնելու համար մարդիկ պետք է հավատան խաղաղ գործընթացին և դրա իրավագործությանը: Մենք ձգտում ենք ամրապնդել խաղաղարար նախաձեռնությունների հանդեպ վստահությունը՝ ուշադրության կենտրոնում պահելով հետևյալ առանցքային խնդիրները.

- ընդլայնել խաղաղարար նախաձեռնություններին հանրության, հատկապես՝ մեկուսի (մարգինալ) խմբերի մասնակցությունը,
- մարդկանց միջև շփումների աշխուժացման միջոցով հակամարտության բոլոր կողմերի միջև վստահություն ձևավորել,
- խրախուսել այն թարմ վերլուծություններն ու նոր գաղափարները, որոնք մարտահրավեր են նետում հակամարտության նկատմամբ առկա մոտեցումներին և առաջ են մղում խաղաղության գաղափարը,
- սատարել ազգային և միջազգային մակարդակով որոշում ընդունող անձանց հետ քաղաքացիական հասարակության աշխույժ երկխոսությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ փոխակերպման հնարավորությունների շուրջ:

## Ինչ ենք մենք անում

Խաղաղարարությունը բարդ գործընթաց է, որում առկա են բազմաթիվ խոչընդոտներ և տարբեր դիրքորոշումներ: Մեր նպատակն այդ տարաձայնությունների հարթումն է՝ հակամարտության կողմերի հանրությունների միջև երկխոսության խրախուսման միջոցով: Երկխոսությանը մասնակցում է հայ և ադրբեջանցի քաղաքական գործիչների, ԶԼՄ-ների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների լայն շրջանակ, ներառյալ Լեռնային Ղարաբաղում և ներկայումս նրա սահմաններից դուրս ապրող մարդիկ:

Մեր աշխատանքն իրենից ներկայացնում է խաղաղարարության ոլորտում գործնական միջոցառումների ընդգրկում ներկայանակ, այդ թվում.

- տեղեկատվական-քարոզչական գործունեություն և երկխոսություն կառավարությունների ու շահագրգիռ այլ կողմերի հետ,
- պետական քաղաքականության վերաբերյալ քննարկումներ և մոդերատորների մասնակցությամբ բանավեճեր,
- խաղաղարարության թեմաներով դասընթացներ և աշխատաժողովներ (սեմինարներ),
- վավերագրական ֆիլմերի նկարահանում և ֆիլմերի հանրային ցուցադրումներ,
- տարբեր հակամարտություններին առնչվող խնդիրների վերաբերյալ տեղեկատվություն, հաշվետվություններ, հանձնարարականներ և հետազոտություններ,
- Լեռնային Ղարաբաղի հակամարտությանն ու կարգավորման գործընթացին նվիրված լրատվական կայք,
- հակամարտությունների համեմատական ուսումնասիրություններ և այցելություններ,
- հակամարտության կողմերի համար համատեղ ուսումնական դասընթացներ և լրագրողական արհեստավարժական ցանցեր,
- գեղարվեստական ցուցահանդեսներ/լուսանկարների ցուցադրումներ և այլ միջոցառումներ:



ՎԵՐԵՎՈՒՄ՝ Խաղաղ գոյակցության թեմայով կոոր սեղան (Բաքու, 2011թ.)

## Անդամ-կազմակերպությունները և նրանց կողմից իրականացվող աշխատանքները

«Եվրոպական գործընկերություն» հանուն Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման» նախաձեռնությունը բաղկացած է հինգ անդամ-կազմակերպություններից, որոնց համակցված գիտելիքներն ու փորձը հիմք են հանդիսանում ձևավորելու գործընկերության համար:

### Conciliation Resources

Conciliation Resources կազմակերպությունն աջակցում է հակամարտող երկրների բնակչության սոցիալական տարբեր խավերի ներկայացուցիչների մասնակցությունը դարաբաղյան խաղաղ գործընթացին: Այդ աջակցությանն են միտված հետևյալ նախաձեռնությունները.

- Երկխոսություն՝ ֆիլմերի միջոցով: Մենք աջակցում ենք տեղական լրատվամիջոցներին ու լրագրողական կազմակերպություններին՝ հակամարտությունը լուսաբանող սեփական ռեպորտաժներ, վերլուծություն և լրահոս պատրաստելու գործում: Մենք աշխատում ենք համընդգրկուն ձևաչափերով, որոնց շրջանակներում ու փակ սահմանների պարագայում հայ և ադրբեջանցի երիտասարդները ծանոթանում են կինոարտադրության նրբություններին: Աշխատում ենք նաև համապատասխան մասնագետների հետ՝ սշակութային ոլորտի հասարակական գործիչների միջև համագործակցության հրապարակային դրսևորումներ նախաձեռնելով: Դիցուք՝ 2012 թվականին նկարահանված հայ-թուրք-ադրբեջանական համատեղ «Տիշտություններ՝ առանց սահմանների» վավերագրական ֆիլմը, որը նվիրված է չկարգավորված ռազմական հակամարտության ժառանգությանը ([www.c-r.org/MWB](http://www.c-r.org/MWB)):
- Ներքին տեղահանված անձանց (ՆՏԱ) համայնքներ. Ադրբեջանում մեր տեղական գործընկերներին օգնում ենք սշակելու և իրականացնելու ՆՏԱ համայնքների ակտիվության բարձրացմանն ուղղված միջոցառումներ, որպեսզի նրանց հանրային մասնակցությունն ավելի արդյունավետ լինի: Մենք կապեր ենք հաստատել ադրբեջանական և վրացական ՆՏԱ համայնքների միջև: Աջակցում ենք նաև տեղահանված հայերի կարիքներին

*«Այս ֆիլմը կարևոր է, քանի որ այն ստիպում է ինքներս մեզ հարց տալ, թե ինչու մեր միջև այդքան շատ ատելություն կա: Ֆիլմի հերոսները և պատմությունները միանգամայն բնական և հուզիչ էին: Նրանք ինձ ստիպեցին նորից մտածել այն հարցի շուրջ, թե ինչպես եմ տեսնում մյուս կողմի մարդկանց:»*  
Հանդիսատեսներից մեկը (Հայաստան)

- ուսումնասիրող հետազոտության անցկացմանը:
- Ղարաբաղի հարցով կոնտակտային խումբ: Մենք աջակցում ենք այս խմբի աշխատանքներին, խումբ, որում ընդգրկված են փորձագետներ ու ակտիվիստներ հակամարտության բոլոր կողմերից, ովքեր հանդիպում են ընդհանուր խնդիրների վերաբերյալ նորարար մոտեցումներ քննարկելու և սշակելու նպատակով: Մենք մի շարք վերլուծական տեղեկանքներ ենք հրապարակել ՆՏԱ համայնքների նկատմամբ արդար վերաբերմունքի, ինչպես նաև այն ցավոտ հարցի շուրջ, թե արժե՞, արդյոք, համագործակցել չճանաչված կազմավորումների հետ, և եթե՞ այո, ապա ինչպե՞ս դա անել:
- «Անալիտիկոն»: Մենք աջակցում ենք Լեռնային Ղարաբաղում հրատարակվող «Analyticon» անկախ քաղաքական ամսագրին: Ամսագրում լուսաբանվում են այնպիսի հարցեր, ինչպիսին են խաղաղ գործընթացն ու տարածաշրջանային քաղաքականությունը: «Անալիտիկոնը» տեղի միակ պարբերականն է, որը տպագրում է նաև ադրբեջանցի լրագրողների հոդվածներ:

### Crisis Management Initiative

Crisis Management Initiative կազմակերպության նպատակն է խաղաղ գործընթացում առկա փակուղային իրավիճակը քննադատական վերլուծության ենթարկել հակամարտությունից առավելա տուժած խմբի՝ երիտասարդության ներգրավմամբ բացառիկ ու բազմամակարդակ երկխոսության մեջ: Կազմակերպության կողմից իրականացվող նախաձեռնությունները ներառում են.

- Հակամարտության բոլոր կողմերի երիտասարդ առաջնորդներին հնարավորություն տալ հանդիպելու և ավելի լավ հասկանալու միմյանց ու իրենց հանրությունների կարիքները,
- Աջակցել երիտասարդներին իրենց հանրություններում վստահության ամրապնդմանն ուղղված տեղական նախաձեռնությունների մշակման և իրականացման գործում: Սույն ծրագիրը նպատակաուղղված է հատկապես նոր սերունդներին, որոնք կողմերի նախապատերազմյան գոյակցության սեփական փորձ չունեն,
- Հանդիպումներ կազմակերպել երիտասարդության և տեղական ու միջազգային պաշտոնյաների միջև՝ պաշտոնական խաղաղ գործընթացի մասին իրազեկելու և այն նոր գաղափարներով սնուցելու նպատակով:

Այսօրինակ նախաձեռնությունները միտված են հակամարտության խաղաղ կարգավորման համընդգրկուն հանրային աջակցության ապահովմանը: 2013-2015թթ. կազմակերպությունն առանձնակի ուշադրություն է դարձնելու հակամարտության տարբեր կողմերում գտնվող երիտասարդ առաջնորդների միջև վստահության կառուցմանն ուղղված համատեղ նախաձեռնությունների զարգացմանը:

### International Alert

Որպես «Եվրոպական գործընկերություն» հանուն Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման» նախաձեռնության առաջատար անդամ՝ International Alert կազմակերպությունը ձգտում է համեմատական ուսումնական ծրագրերի միջոցով Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ ձևավորել այլընտրանքային տեսակետներ և նոր դիսկուրս:

Այդ նպատակին հասնելու համար International Alert կազմակերպությունն աջակցում է տեղական այն խմբերին, որոնք մասնակցում են հակամարտության արմատական լեզվի ու գաղափարախոսության այլընտրանքների մշակման շուրջ

հանրային կարծիքի ձևավորմանը: Այդ խմբերում ընդգրկված են առաջատար լրատվամիջոցները և փորձագիտական հանրույթը:

- Առաջատար լրատվամիջոցներ: Հակամարտության հետազոտման համատեղ ուսումնական «համակեցության» ծրագրերին» ներգրավելով միջին օղակի լրագրողներին ու խմբագիրներին՝ մենք նպաստում ենք նրանց մասնագիտական աճին, օգնում մյուս կողմի իրենց գործընկերների հետ կապեր հաստատելու և փորձառություն ձեռք բերելու այլ հակամարտ գոտիներում խաղաղարարության օրինակներով: Այնուհետև նրանք ստացած գիտելիքներով կիսվում են տեղական խոշոր լրատվամիջոցներով՝ հասարակ մարդկանց օգնելով լիարժեք պատկերացում կազմելու այն մասին, թե ինչպես է այլ հակամարտություններից տուժածներին հաջողվել վերականգնելու վստահությունն ու խաղաղ գոյակցելու նախկին թշնամիների հետ:

*«Բոսնիայում և Հերցեգովինայում այն էթնիկական խմբերի ներկայիս խաղաղ գոյակցությունը, որոնք մինչև վերջերս պատերազմական վիճակում էին գտնվում, Հարավային Կովկասի համար լավագույն օրինակն է ընդհանուր ապագայի որոնումների, ապագա, որը մերժում է օտար տերությունների շահերը և ծառայում բացառապես կողմերի ընդհանուր շահերին:»*

Լրագրողների ուսուցման ծրագրի մասնակիցներից մեկի հողվածից

- Փորձագիտական հանրույթը և քաղաքացիական հասարակության առաջնորդները: Հակամարտության տարբեր կողմերում գտնվող փորձագետ-վերլուծաբաններին և քաղաքացիական հասարակության առաջնորդներին հնարավորություն տալով ուսումնասիրելու այլ հակամարտությունների հետ կապված խնդիրների լուծման մեխանիզմները՝ մենք նրանց աջակցում ենք հետազոտության արդյունքները ներկայացնելու հեռավոր շրջանների, ինչպես նաև խոշոր քաղաքների բնակիչներին: Սա խթանում է դարաբաղյան հակամարտության նկատմամբ խաղաղարար նոր մոտեցումների առավել ընդգրկում քննարկումը:

*«Լեռնային Ղարաբաղի հակամարտության պարագայում խաղաղարարության ոլորտի ծրագրերի տարանջատվածությունը նման աշխատանքի ոչ բավարար արդյունավետ լինելու պատճառներից մեկն է:»*

Փորձագիտական խմբի համատեղ հրապարակումից

International Alert կազմակերպությունը նաև աջակցում է համատեղ հրատարակության պատրաստման գործին, որտեղ վերլուծվում են դարաբաղյան հակամարտության համապատկերում խաղաղարարության 20 տարիների ընթացքում իրականացված քաղաքացիական հասարակության խաղաղարար նախաձեռնությունները: Այդ հետազոտության շրջանակներում անցկացված ֆոկլոր-խմբերն ու անհատական հարցազրույցները նպաստել են անցած ժամանակաշրջանի վերլուծություններին քաղաքացիական հասարակության ավելի լայն շերտերի ներգրավմանը՝ որպես այլ հակամարտային իրավիճակների փորձի քննարկման մեկնակետ:

### The Kvinna till Kvinna Foundation

Շվեդական Kvinna till Kvinna հիմնադրամն աջակցում է հայ և ադրբեջանցի կանանց կազմակերպություններին՝ կանանց հնարավորությունների ընդլայնմանը և դարաբաղյան խաղաղ գործընթացին նրանց մասնակցությանը նպաստելու համար (ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի «Կանանց, խաղաղության և անվտանգության մասին» թիվ 1325 շրջանակային բանաձևի հիման վրա):

Kvinna till Kvinna կազմակերպությունը գտնում է, որ կայուն խաղաղ գործընթացը պետք է ներառի քաղաքացիական հասարակությունը և ապահովի կանանց ու տղամարդկանց հավասար մասնակցությունը:

Հիմնադրամի նախաձեռնություններն այս ոլորտում ներառում են՝

- Աջակցել կանանց չորս տեղական կազմակերպությունների, որոնք միասին աշխատում են Լեռնային Ղարաբաղի հակամարտությունից տուժած երիտասարդ հայ և ադրբեջանցի կանանց սատարելու ուղղությամբ, օգնելով

## Ինչպես ենք հետամուտ լինում փոփոխություններին

Խաղաղ գործընթացը ցայժմ չի հանգեցրել երկար սպասված ու ցանկալի ձեռքման: Հակամարտության տարբեր կողմերի կառավարությունների ու հանրությունների հոռետորաբանությունը գնալով ավելի բևեռացված ու զգայական բնույթ է կրում, ինչն էլ ավելի է բարդացնում մեր աշխատանքը:

- Մենք փորձում ենք այդ մարտահրավերներին դիմակայել գործընկերային հարաբերությունների ձևավորման և խաղաղարարության նորարարական այնպիսի մոտեցումների սնունդով, որոնք նպատակամետ կերպով են իրավիճակի փոփոխմանը և դեպի խաղաղություն կողմնորոշմանը,
- Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում եվրոպական ոչ կառավարական կազմակերպությունների (ՈԿԿ) ներգրավման նպատակով քաղաքացիական հասարակության անկախ կառույցի ստեղծում,
- Ողջ տարածաշրջանի երիտասարդությանը, կանանց, ՆՏԱ-ներին, քաղաքացիական հասարակության ակտիվիստներին, քաղաքական գործիչներին, լրագրողներին ու կինոգործիչներին միավորել երկխոսության ու փոխգործակցության տարաբնույթ մեխանիզմներ. հիմնական նպատակը հակամարտության կողմերի միջև հարաբերությունների ձևավորման է ու վստահության ապահովումը,
- Մեր ողջ գործունեության ընթացքում գենդերային առումով հավասարակշռված մոտեցման խթանում,
- Առավել լայն տարածաշրջանային դիմամիկային արագ հարմարվելու հնարավորություն ունենալու նպատակով մեր աշխատանքի ձևերն ու կառուցակարգում: Ընդամենը, իրար փոխլրացնող մեր միջոցառումները անկախ բնույթ են կրում, իսկ անդամ-կազմակերպությունները հաճախ օգտագործում են ընդհանուր նպատակին հասնելու տարբեր մոտեցումներ:

Նրանց ավելի ակտիվ դեր ունենալ խաղաղ գործընթացում և ներագրել այն որոշումների վրա, որոնք վերաբերում են իրենց իսկ կյանքին: Կարևոր բաղադրիչներից մեկը հակամարտության պատճառով իրարից օտարված երիտասարդ կանանց հանդիպումների և փորձի փոխանակման հնարավորության ընձեռումն է, ինչն էլ հանգեցնում է կանանց միջև համերաշխությանը:

- Տեղացի կանանց և աղջիկներին սովորեցնել, թե ինչպես խաղաղ գործընթացի շրջանակներում հետամուտ լինել կանանց իրավունքներին:
- Տեղական և միջազգային մակարդակով որոշում կայացնողներին հասու դարձնել այն միտքը, որ կանայք խաղաղության համար պայքարի կարևոր մարտիկներն են, ում աշխատանքը խաղաղարարության ոլորտում պետք է ճանաչվի, և որ նրանք պետք է ներգրավվեն իրենց իսկ հանրությունների պայգան սահմանող որոշումների ընդունման գործընթացում:
- Կատարված եզրահանգումների օգտագործումը քաղաքական գործիչների և դիվանագետների կողմից, օրինակ՝ 2012 թվականին ԵՄ ֆինանսական աջակցությամբ պատրաստված «Ուժերի հավասարակշռություն. կայուն խաղաղություն» զեկույցը, որը ներառում է դարաբաղյան խաղաղ գործընթացում կանանց մասնակցության ճանապարհին առկա խոչընդոտների վերլուծություն:

*«Մենք երիտասարդ կանանց հետ շատ ենք քննարկել տղամարդկանց ու կանանց դերը: Նրանք ասում են, որ գոյություն ունի գերիշխող սոցիալական նորմ, ըստ որի քաղաքականությունը տղամարդու գործ է, և կանայք պետք է պասիվ լինեն այդ ասպարեզում: Սակայն մեր սեմինարներից հետո երիտասարդ կանայք ասում էին, որ պատրաստ են մասնակցել Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծմանն առնչվող բոլոր գործընթացներին:»*

Ռենա Թահիրովա՝ ադրբեջանական ֆեմինիստական խմբի անդամ, «Յուվա» հումանիտար կենտրոն

- 2011 թվականից ի վեր կազմակերպությունը ռուսերեն և անգլերեն լեզուներով պատրաստում է CommonsSpace.eu ամենօրյա տեղեկատվական առցանց հրատարակությունը, որը Հարավային Կովկասի հանրություններին տեղեկացնում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության և տարածաշրջանային այլ կարևոր իրադարձությունների վերաբերյալ տարբեր հայացքների ու կարծիքների: Էլեկտրոնային այս հանդեսը նաև օգնում է հակամարտությունների խաղաղ կարգավորմանը և դրանց հիմքում ընկած խնդիրների ավելի խորունկ ըմբռնմանը նպաստող այլընտրանքային տեսակետներ հայտնելուն (տես՝ [www.commonspace.eu](http://www.commonspace.eu)): Ի հավելումն կայքի՝ ունենք նաև հանրաժանոթ ֆեյսբուքյան էջ (CommonSpace) և Թվիթերի լրահոս (@commonspaceEU):
- Կազմակերպությունը պատրաստում է եռամսյակային վերլուծական զեկույց՝ «CommonspaceExtra», որը պարունակում է հակամարտության և խաղաղ գործընթացի խորը վերլուծություն: Այդ աշխատանքը կատարվում է ինչպես վերլուծաբանների, քաղաքական գործիչների ու դիվանագետների կողմից, այնպես էլ նրանց իսկ համար՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը դիտարկելով ավելի լայն՝ տարածաշրջանային համապատկերում:
- Կազմակերպությունը պարբերաբար ապահովում է Հայաստանի և Ադրբեջանի կառավարությունների, խորհրդարանների ու քաղաքական ուժերի, Լեռնային Ղարաբաղի դե ֆակտո իշխանությունների, Լեռնային Ղարաբաղից ադրբեջանցի ՆՏԱ-ների և հակամարտության տարբեր կողմերում գտնվող շահագրգիռ այլ կողմերի հետ երկխոսությունն ի նպաստ հակամարտության կարգավորման վերաբերյալ նոր գաղափարների ու մտտեցումների լայն քննարկման:
- Կարծրատիպային դիրքորոշումների քննադատական քննարկում և առավել ընդգրկուն ռազմավարական մտածողության խրախուսում՝ Հայաստանի և Ադրբեջանի ՉԼՄ-ներում հողվածների և հարցազրույցների, ինչպես նաև տարածաշրջանում կազմակերպվող կլոր սեղաններին, խորհրդաժողովներին և այլ միջոցառումներին մասնակցության միջոցով:

## LINKS – Երկխոսություն -Վերլուծություն - Հետազոտություն

LINKS կազմակերպությունը խթանում է առավել ընդհանուր տարածաշրջանային և միջազգային համապատկերում Լեռնային Ղարաբաղի հակամարտության ընկալմանը՝ միջազգային հանրության հետ մշտական փոխգործակցության միջոցով: Դա արվում է զանազան հրատարակությունների և կառավարությունների ու տարբեր հաստատությունների համար կազմակերպվող բրիֆինգների միջոցով՝ ինչպես ԵՄ-ի շրջանակներում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

«Եվրոպական գործընկերություն՝ հանուն Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման» (ԵԳԼՂ) ծրագրում LINKS-ի ավանդը ներառում է.



## ԵԳԼՂ առանցքային թեմաները

Մեր աշխատանքը կենտրոնացված է հետևյալ թեմաների շուրջ.

**Երկխոսություն.** Մենք երկխոսությունը դիտարկում ենք որպես խաղաղարարության անկապտելի մաս և, հետևաբար, մեր աշխատանքի մեծ մասում այն կիրառում ենք: Երկխոսությունը կարող է օգնել տարածաշրջանի մարդկանց ինքնուրույն զարգացմանը և նպաստել նրանց հանրություններում փոփոխությունների իրականացմանը՝ հակամարտության մասին սիանգամայն տարբեր հայացքներ ունեցող գործընկերների հետ փոխգործակցության միջոցով:

**Ուսումնասիրություններ և վերլուծություններ.** Մեր ուսումնասիրություններն ու վերլուծությունները նպատակամիտված են թարմ գաղափարների բացակայությանը մարտահրավեր նետելուն և խաղաղ գործընթացի համար նոր գաղափարներ ու մոտեցումներ առաջարկելուն: Մեր կողմից ներկայացվող փաստական նյութը մարդկանց օգնում է նոր և առավելադրական հենքի վրա վերստին դիտարկել Լեռնային Ղարաբաղի հակամարտության առանցքային հայեցակետերը: Մա նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին մեծ վստահություն ու փոխըմբռնում է ներշնչում, որոնք էլ անհրաժեշտ են հակամարտություններին առնչվող խնդիրների շուրջ քաղաքական սուբյեկտների հետ երկխոսելու համար:

**Ֆիլմեր և ՋԼՄ-ներ.** Մենք ամենատարբեր ու յուրօրինակ ձևերով ենք ֆիլմերն ու լրատվամիջոցներն օգտագործում հայ և ադրբեջանական բևեռացված հասարակությունների միջև փոխըմբռնում ապահովելուն նպաստելու նպատակով: ՋԼՄ-ների հետ կապված մեր ծրագրերը նպատակաուղղված են հակամարտությանն առնչվող խնդիրների մասին իրազեկվածության աճին, դրանք պսակագերծում են մյուս կողմի կարծրատիպերը և նպաստում տարբեր խմբերի միջև բանավեճերի կազմակերպմանը: Մեր աշխատանքներում ներգրավում ենք առաջատար լրագրողների, ռեժիսորների և հանրային կարծիք ձևավորող այլ անձանց՝ հակամարտությանն առնչվող իրադարձությունների առավելա նրբանկատ ու նրբերանգային մեկնաբանման համար: Ֆիլմերը մեր լսարանների համար հասանելի են դառնում կոնկրետ լսարանների համար հասցեական ցուցադրումների և համացանցի միջոցով:

**Մասնակցություն և ներգրավվածություն.** Մենք ձգտում ենք խաղաղ գործընթացում նոր ու տարաբնույթ խմբեր ներգրավել, ինչպես նաև մեկուսացված խմբերին արտահայտվելու հնարավորություն տալ: Այդ խմբերը ներառում են երիտասարդներ, կանայք, տեղահանված անձինք, քաղաքացիական հասարակության ակտիվիստներ, փորձագետներ, քաղաքական գործիչներ, լրագրողներ և կինոգործիչներ:

Մեր նաև ձգտում ենք նպաստել խաղաղ գործընթացում տարբեր տեսակետների, վերլուծությունների ու գաղափարների ներգրավմանը: Մենք ձգտում ենք քաղաքացիական հասարակության սուբյեկտների ներուժը մեծացնել, որպեսզի նրանք կարողանան մասնակցել հակամարտության վերաբերյալ թարմ վերլուծությունների ու նոր հայացքների տեղիք տվող



ՎԵՐՆԵՎՈՒՄ՝  
«Տիշողություններ՝ առանց սահմանների» ֆիլմի  
նկարահանումներից (Լեռնային Ղարաբաղ, 2011թ.)

քննարկումների, որոնցում խաղաղությունը դիտարկվում է որպես գլխավոր նպատակ:

### Վերապատրաստում և կարողությունների զարգացում.

Տարածաշրջանում կազմակերպում ենք անհատական ուսումնական դասընթացներ, արտագնա սեմինարներ, հանրային քննարկումներ ու դասախոսություններ, որոնց նպատակը հանրության գորեղացումն է և այն խմբերի հնարավորությունների շրջանակի ընդլայնումը, ում հետ աշխատում ենք: Վերապատրաստման ու կարողությունների զարգացման հետ առնչվող մեր գործունեության հայեցակետերը ներառում են.

- Հակամարտության համատեքստում կինոֆիլմերի և ՋԼՄ-ների դերը հայ և ադրբեջանցի երիտասարդների համար,
- Լրագրողների և խմբագիրների մոտ հակամարտության նկատմամբ զգայունություն և վերլուծելու հակվածություն, ինչպես նաև այլ հակամարտ իրավիճակներից ու խաղաղ գործընթացներից դասեր քաղելու հնարավորություն,
- Երիտասարդության և կանանց շրջանում խաղաղարարության ընկալման բարելավում, ինչը նրանց թույլ կտա ավելի ակտիվ դեր ունենալ տեղական հանրույթներում:



Մեր աշխատանքի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկությունների համար կարող եք այցելել [www.epnk.org](http://www.epnk.org) կայքէջը կամ դիմել [info@epnk.org](mailto:info@epnk.org) էլ. փոստի հասցեով:

Սույն փաստաթուղթը պատրաստվել է Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ: Այս փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու են բացառապես «Եվրոպական գործընկերություն՝ հանուն Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման» (ԵԳԼՂ) նախաձեռնությունը և նրա անդամ-կազմակերպությունները, այն ոչ մի կերպ չի կարող դիտարկվել որպես ԵՄ-ի դիրքորոշման արտացոլում:

